



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 դեկտեմբերի 2018 թ. թիվ 135 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2019Թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Տերտերյանի 2018թ. նոյեմբերի 30-ի թիվ 03/15.1/9501-18 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ եմ

1. Ստեղծել անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

- Վ.Սուքոյան - Հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Ա.Աչինյան - ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Տավուշի մարզային գործակալության պետ
- Ա.Ամիրխանյան - Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ
- Ս.Քամայան - ՀՀ ԳՆ ՀՀ Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների Տավուշի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
- Զ.Մարդանյան - ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի» Տավուշի մարզային գրասենյակի ղեկավար
- Կ.Մկրտչյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Դիլիջանի տարածքի գլխավոր մասնագետ
- Գ.Վիրաբյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Բերդի տարածքի գլխավոր մասնագետ
- Ա.Խաչատրյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Իջևանի տարածքի գլխավոր մասնագետ
- Ն.Հարությունյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Նոյեմբերյանի տարածքի գլխավոր մասնագետ

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ Վ.Սուքոյան/ մինչև 2019թ. հունվարի 18-ը մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել անասունների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:

4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:



Վ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

X *[Handwritten signature]*

2018թ. դեկտեմբերի 10
Իջևան

